

ԸՆԴԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ  
ՀԱՍՄԻԿ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ՝  
«ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ»  
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրիգոր Մագիստրոս Բջնեցի-Պահլավունին (մոտ 990-1058) հայ միջնադարյան այն հեղինակներից է, որի գործերը միշտ ուսումնասիրման, հետազոտման անսպառ նյութ են տալիս: Այս առումով ներկայացվող աշխատանքը ևս նման մի փորձ է՝ կատարված հիմնականում Մաշտոցյան մատենադարանի ձեռագրական հարուստ նյութի հիման վրա:

Մագիստրոսը տարաբովանդակ գործերի հեղինակ է, ինչն էլ առանձնակի արժևորվում է աշխարհիկ հեղինակ լինելու հանգամանքով. նա ցայժմ մեզ հայտնի առաջին աշխարհիկ մատենագիրն է:

«Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում» ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հարցի պատմությունը բավականին հանգամանալից ներկայացնելուց հետո տրվում են հետազոտության առարկան, արդիականությունն ու գիտական նորույթը, նպատակներն ու խնդիրները, գիտական վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, մեթոդները: Այսինքն՝ աշխատանքը բավարարում է հրապարակային պաշտպանության ներկայացվող թեկնածուական ատենախոսության պահանջներին: Գովելի փաստ է, որ Հ. Հովսեփյանը թեմայի առնչությամբ հրատարակել է ութ հոդված և մեկ մենագրություն:

Ուսումնասիրությունը կատարված է մի քանի ասպեկտներով, որոնցից առաջինը, ինչպես երևում է վերնագրից, ձեռագրագիտականն է: Այս ուղղությամբ, իսկապես լուրջ աշխատանք է տարվել: Այսպես՝ առաջին գլխի

սկզբում, որտեղ երիտասարդ հեղինակը ներկայացնում է Գրիգոր Մագիստրոսի գործերի գրչագրերը, ձեռագրագիտական տվյալների համադրմամբ ճշտում է ձեռագրի պատվիրատու-ստացողի ինքնությունը (Մաշտոցյան մատենադարան, ձեռ. 1741), ցուցաբերում է համեմատական բնագիր կազմելու հմտություններ:

Հասմիկ Հովսեփյանի աշխատանքը կարևորվում է ոչ միայն զուտ բանասիրության, ձեռագրագիտության (Ա գլուխ), գրականագիտության (հատկապես Բ գլուխ), պատմագիտության (Գ գլուխ մասնակիորեն) դիտանկյուններից, այլև միջգիտակարգային՝ գրականության սոցիոլոգիայի առումով: Այսպես՝ առաջին գլխի առաջին ենթագլխում, որտեղ քննում է Մագիստրոսի երկերը ընդգրկող ձեռագիր աղբյուրները, առաջադրում է հետևյալ հարցերը.

«Ա.ո՞ր վարդապետարաններում են կիրառվել հեղինակի երկերը,

Բ. ո՞վքեր են շրջանառել նրա ստեղծագործությունները,

Գ.տարբեր ժամանակներում Մագիստրոսի հատկապես ո՞ր ստեղծագործություններն են սիրված ու տարածված եղել,

Դ.Մագիստրոսի ո՞ր ստեղծագործություններն են եղել ձեռագրական ընտրանի հավաքածուներ կազմողների ուշադրության կենտրոնում,

Ե.ի՞նչ առանձնահատկություններ ունեն հեղինակի երկերի ընդօրինակություններն ամփոփող մատյանները,

Չ.պահպանված ամենահին օրինակներն ու գրեթե ամբողջական ձեռագրերն ի՞նչ միջավայրերի ծնունդ են» (Էջ 17-18):

Սրանք հարցեր են, որոնց պատասխանները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու ժամանակի գրական ճաշակի, գրականության, գրավոր խոսքի շուրջ եղած հասարակական հարաբերությունների մասին:

Հ. Հովսեփյանը ներկայացնում է Մագիստրոսի երկերը ներառող գրչագրերի ստեղծման ժամանակը և աշխարհագրությունը, ցույց տալիս առավել ընդօրինակվածները և նշում դրանց պահպանման ներկայիս վայրերը:

Հատկանշական է, որ հետազոտողը, ի թիվս տարբեր աղբյուրների, հմտորեն օգտվել է ձեռագրացուցակներից, հիշատակարաններից, ինչպես նաև այլալեզու գրականությունից: Ատենախոսության վերջում զետեղված է օգտագործված գրականության ցանկը՝ պատկառելի թվով (235 անուն):

Ներածությունը սկսվում է «Թեև Գրիգոր Մագիստրոսի (մոտ 990-1058) գրական լեզուն բանասիրության մեջ մեծ դժվարություններ է առաջ բերել վերջինիս ստեղծագործության բովանդակային ընկալման տեսակետից, այնուամենայնիվ նրա շուրջ հետաքրքրությունների սահմանն անցնում է նույնիսկ հայ գրականագիտության շրջանակը» նախադասությամբ, որին անմիջապես հաջորդում է բուն շարադրանքը, առանց մանրամասնելու, թե ով է Գրիգոր Մագիստրոսը, երբ, որտեղ է ապրել ու գործել: Սա անսովոր մոտեցում է, թեև կարելի է բացատրել աշխատանքի հեղինակի՝ ասելիքն ավելորդ չծանրաբեռնելու ազնիվ մղումով, իսկ գիտնականների ավագ սերունդը սովոր է բուն ասելիքից առաջ ներկայացնել, ոչ միայն հետազոտվող հեղինակի, կենսագրական համառոտ կամ ընդարձակ տեղեկություններ, այլև երբեմն պատմական ակնարկ անել (կրկին՝ համառոտ կամ ընդարձակ)՝ ցույց տալու համար միջավայրն ու հանգամանքները, որոնք ձևավորել են անհատին: Մինչդեռ 2.1՝ «Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված նամակների քննությունը» ենթազվիտում մոտավորապես 4 էջի սահմաններում մեկտեղում է Թոռնիկ իշխանի (նաև նրա սերունդների) մասին եղած տվյալները (հատկապես հիշատակարանային)՝ հնարավորինս ամբողջական ներկայացնելու Գրիգոր Մագիստրոսի նամակների հասցեատիրոջ ինքնությունը:

1.5՝ «Գրիգոր Մագիստրոսի քերականական դասագրքի դերը Սյունյաց ուսումնագիտական կյանքում» ենթազվիտում փորձում է տեղորոշել Սարկավազանց վանքը, կատարում է ձեռագրագիտական հետազոտում, ճշտում է, թե ինչպես և ինչու է ՄՄ 3917 ձեռագիրն անցել Տաթևի վանք - Սարկավազանց վանք - Տաթևի վանք - Էջմիածնի մատենադարան - Մաշտոցյան մատենադարան ուղին (էջ 71):

Նկատելի է, որ հեղինակը տեղեկատվություն հավաքելու ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել և այնքան է խորացել ուսումնասիրվող նյութի մեջ, որ երբեմն չի նշել որոշ տվյալներ՝ դրանք ակնհայտ համարելով, ինչպես. «Հովհաննես Երզնկացին իր քերականության մեջ ամբողջությամբ ներառել է Մագիստրոսի՝ վաղ հեղինակների՝ Դավթի, **Անանուն-Մամբրեի**, Մովսեսի, Ստեփանոսի քերականության մեկնություններն ընդգրկող բնագիրը՝ ձեռքի տակ չունենալով նշված մեկնիչների գործերը» (ընդգծումը մերն. է - Ն.Թ., էջ 63): Սա Ն. Ադունցի «Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնը

նորին» աշխատությունից անուղղակի մեջբերում է (թեև հղված չէ էջը), այսուամենայնիվ շփոթից խուսափելու համար գոնե առաջին անգամ այդ անունները տալիս հարկ էր նշել ապրած տարիները կամ ժամանակը, մականունները կամ երկրորդ անունները: Միայն Հովհաննես Երզնկացի անունով չորս վարդապետ են հայտնի ԺԳ-ԺԴ դդ., որոնցից երկուսը հաստատապես հեղինակել են քերականության մեկնություն: Ատենախոսության մեջ խոսքը, ամենայն հավանականությամբ, Հովհաննես Պլուզ Երզնկացու մասին է, քանի որ Հովհաննես Երզնկացի-Ծործորեցին Հ. Հովսեփյանի աշխատանքում միայն Ծործորեցի ձևով է հանդիպում: Հովհաննես Երզնկացի-Ծործորեցին 1314 թ.՝ Ծործորի վանք տեղափոխվելուց հետո է առավել հաճախ հիշատակվում է Հովհաննես Ծործորեցի: Շարադրանքում գուցե հենց Գրիգոր Մագիստրոսի խոսքի ազդեցությունը կա, ըստ որի ընթերցողը պիտի պատրաստված լինի, հասկանալու համար, թե ում և ինչի մասին է խոսքը:

Հետաքրքիր վարկած է առաջ քաշել «Սապես կամելով մեր գյաւշուածս կիտին, զոմանս ի շամբուրս հարեալ ի վերայ Հեփեստեայ, զոմանս ի սանի Պոսիդոնիւ ամոքեալ, եւ զոմանս ի տապակի տրամադրական մակեղուտ ելով ելլադացի իւղովք, եւ զոմանս ծպտեալ ի մէջ Դիայ, պարապատեալ արմանօք, քառանկիւնի և ուղղանկիւնի յարամանեալ ըմբոն» (էջ 80) հատվածի «ծպտեալ ի մէջ Դիայ» այլաբանության վերծանման համար՝ համարելով, որ Դիասը/Դիոսը/Չևսը խորհրդանշում է քար և անձավ (էջ 79):

Չուտ բանասիրական մոտեցման օրինակ է հետևյալը. «Առ խրախճանս մայրաքաղաքացի եւ վարդապետք» (ԿԲ) թղթում պատմվող առակի խրատական հատվածում Գրիգոր Մագիստրոսն օգտագործել է «ամպելասք» բառը, որ հայերենի բառարաններում բացակայում է: Հ. Հովսեփյանը լրացրել է Գոհար Մուրադյանի դիտարկումը՝ «ամպելասք»ի համեմատությունը άμπελος-ի՝ խաղողի որթի հետ և պարզել, որ ամպելասքը խաղողագործներն են՝ ըստ αμπέλι (խաղողի այգի) - αμπελουργός/ αμπελάς բառակազմավորման շարքի (էջ 105):

Գրիգոր Մագիստրոսը գեղարվեստական մտածողության տեր մատենագիր է, և նրա գրավոր խոսքը երբեմն ունենում է նարատիվ այնպիսի դրսևորումներ, որոնք Ի դարի սկզբի եվրոպական մոդեռնիստական գրականության մեջ բավականին սիրված գրական միջոցի, մեթոդի՝

գիտակցության հոսքի (stream of consciousness) նախատիպը կարելի է համարել: Այս հեղինակի՝ պատկերավորման զանազան միջոցներով, ոճաբանական տարատեսակ հնարներով, ակնհայտ և թվացյալ մեջբերումներով, այլուգիաներով, ակնարկներով, շրջասություններով, թերասություններով ևն առլեցուն բնագրերը, կարծում ենք, դժվարհասկանալի էին անգամ ժամանակակիցների համար, էլ չենք խոսում հետագա սերունդների մասին, որոնց լեզվամտածողությունը բազում, երբեմն հիմնավոր փոփոխություններ է կրել: Աշխարհաբարի փոխադրելը դժվարությունների է հանգեցնում հատկապես նկատի ունենալով ինքնաստեղծ բառերն ու արտահայտությունները, որոնց կազմության մեջ քիչ չեն և օտարաբանությունները: Մեր հետազոտողը՝ Հասմիկ Հովսեփյանը, հաշվի առնելով այս ամենը, այդուամենայնիվ որոշ հատվածներ բավականին հաջող վերածել է աշխարհաբարի: Այստեղ երևում է նրա՝ սիրով և նվիրումով կատարած բավականին բծախնդիր գործը, որի ընթացքում մեկնաբանել, քննել է ամեն մի բառ ու արտահայտություն՝ ուշադրության կենտրոնում ունենալով նաև ձեռագրական տարընթերցումները: Պետք է նկատել, որ կան բառեր, որոնց հոմանիշ կառույցների գործածման կարիքը չկար աշխարհաբար տեքստում, քանի որ այդ բառերը ինքնին արդեն հասկանալի են, ինչպես, ասենք, «նեռը», որ փոխարինել է «սուտ Քրիստոսով» («Ներծուն նպաստ նաջան նեռին նարին կիզողական»): Կամ այս նույն տողում կիզողական բառի համար ՆՀԲ-ից բերել է կիզողական՝ «կիզիչ-կիզողական հուր կամ զօրութիւն, կամ փործութիւն» իմաստները և ընտրել «կիզիչ զօրությունը», մինչդեռ կարելի էր հենց «փործություն»ը ընտրել և կստացվեր «Նեռը փործությամբ, հակառակ քո ջանքերին, քեզ իրեն գործակից է դարձրել» (էջ 40-41):

Հատկանշական է, որ «Տաղասացութիւն»/«Հազարտողեան» երկի ժանրային պատկանելությունը քննելիս նկատի է ունեցել նաև ձեռագիր ընդօրինակություններում եղած վերնագրերը. «Այսպիսով՝ կարծում ենք՝ «Հազարտողեանը» **տաղ է՝** գովեստի բնույթով, արաբական տաղասացությամբ՝ կաֆայով գրված հազարտողյան **նտանավոր՝** ստեղծված կոնկրետ գործնական նպատակով և ունի տաղաչափական, ինչպես նաև ուսուցողական արժեք» (էջ 60): Իսկ բնագրագիտական համեմատությունից հետո ասում է. «Այսպիսով՝ մեր կարծիքով՝ արաբական տաղաչափությամբ (կաֆայով) գրված միջնադարյան ըմբռնմամբ իր **չափածո կառուցվածքով**

**տաղ ընկալվող** այս ստեղծագործությունը հազարտողյան **ոտանավոր է**, որի ծավալուն լինելը պայմանավորված է արծարծված թեմայի ընտրությամբ՝ սուրբգրային հիմնական դրվագների և քաղվածքների անհրաժեշտ առատությամբ» (*ընդգծումները մերն են - Ն. Թ.*): Եթե առաջին պարբերության մեջ ոտանավոր ասելով հեղինակը նկատի ունի թերևս գրական ստեղծագործության կառուցման տեսակը, ապա երկրորդ մեջբերման մեջ տաղն է համարում կառուցվածքային տեսակ: Այստեղ շարադրման անհարթությունն է զգացվում, ինչից ասելիքը հակառակ իմաստով է ներկայանում:

Մեկ այլ նկատում «Հազարտողյան»ի առիթով: Հանգամանորեն քննելով հարցի վերաբերյալ եղած տեսակետները, վերլուծելով երկի կառուցվածքը, նյութը, բովանդակությունը, նպատակը՝ գրում է. «Չմոռանանք, որ քրիստոնեական կրոնի դերն ու առավելությունն ընդգծելու, «Ավետարանների հեղինակությունը փրկելու մտադրությամբ» (մեջբերումը Վ. Ներսիսյանի ուսումնասիրությունից է - Ն.Թ.) Մագիստրոսն ընդդիմանում է արաբ բանաստեղծին, միաժամանակ իր դաստիարակչական և ուսուցողական նպատակով ձեռք է բերում ծրագրային նշանակություն՝ **աղերսներ դրսևորելով Ն. Շնորհալու «Յիսուս որդին»** երկի հետ» (Էջ 62, ընդգծումը մերն է - Ն.Թ.): Գրիգոր Պահլավունու (մոտ 990-1058) 1045 թ. գրած պոեմը չէր կարող աղերսներ դրսևորել Ներսես Դ Հռոմկլայեցու (1102-1173)՝ ավելի քան մեկ դար հետո՝ 1152ին, գրած գործի հետ: Հակառակը՝ Ներսես Շնորհալին ազդվել է իր մեծ պապի՝ Գրիգոր Մագիստրոսի գործերից, և երկն էլ աղերսներ է դրևորել վերջինիս պոեմի հետ: Սա թերևս նույնպես անհաջող շարադրման հետևանք է:

Տեխնիկական մի նկատում. Բողլեյան գրադարանի անունը բնագրում մի տեղ հայերեն է, մի տեղ՝ անգլերեն, իսկ Նյու Յորքի հանրային գրադարանը միայն անգլերեն է գրված (Էջ 28): Տողատակի ծանոթագրություններում դա ընդունելի է, իսկ հայերեն հիմնական շարադրանքում ցանկալի չէ: Մի քանի տեղ հավաքածու-ժողովածու, տարընթերցում-ընդօրինակություն, այլասացություն-տարընթերցում հասկացությունների շփոթ կա: Նման վրիպումները ամենևին չեն ստվերում այն ծավալուն աշխատանքը, որ ակնհայտ սիրով, պատասխանատվությամբ ու հմտորեն կատարել է Հասմիկ Հովսեփյանը:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունին բարդ հեղինակ է նույնիսկ դոկտորական ատենախոսության համար, և նրա ստեղծագործությունների քննությունը թեկնածուական ատենախոսության շրջանակում իսկապես մարտահրավեր է, և ատենախոսը պատվով է դուրս եկել իր վրա վերցրած հաճելի բեռի տակից:

Այսպիսով՝ մեկ անգամ ևս ընդգծենք, որ ատենախոսությունը թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային, թե՛ ծավալային և թե՛ գիտական ապարատի առումներով համապատասխանում է Ժ. 01.01-«Հայ միջնադարյան և նոր գրականության թվանիշին, բավարարում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջները, ուստի միջնորդում ենք ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդին՝ Հասմիկ Գագիկի Հովսեփյանին շնորհել իր հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը

«Չորս գետը»

արևելաքրիստոնեական ուսումնասիրությունների  
գարգացման հիմնադրամի  
խմբագրական խորհրդի անդամ,  
փորձագետ, Բ.Գ.Թ.

Լաիրա Թամամյան  
(Աթենք)

Բ.Գ.Թ. Լաիրա Թամամյանի ստորագրությունը հաստատում եմ

«Չորս գետը»

արևելաքրիստոնեական ուսումնասիրությունների  
գարգացման հիմնադրամի  
գիտական ծրագրերի ղեկավար,  
արվեստագիտության թեկնածու



Միքայել Առաքելյան  
(Մոսկվա)



07-ը մայիսի 2024 թվական